

Վեսելովսկին մի առ մի մատնանիչ է անում Շահազիզի ճոխ , պե-
րանոյշ լեզուն , դողալիկ դարձուածքները , ազատամիտ գաղափարների
չնչով ուսացած ազգային բարեկիրթ դաստիարակութիւնը , ցոյց է տալիս ,
որ երիտասարդ թարմ մտքերի քարոզիչն է Ս. Շահազիզ պօէմում , ու
նա մտրակում է հին ու փթած յետադիմութիւնը , ազգապաշտութիւնը ,
կեղծիքը , ուր երգում է ազգի « չարին ու բարին » , սէրը , վիշտը ,
տանջանքը , ձգտումը , կարիքը , պահանջները , թերութիւնները եւ այլն :
Ա.Մ.ն մի տողի մէջ արդար բողոքի ձայն է լսվում եւ հրաւիրական կոչ
« Յառա՛ջ ազգութիւն » : Այդ բոլորը պ. Վեսելովսկին իմի է ամփոփում
բանաստեղծի ուղղութիւնը եւ արժանիքը իտէալական , գեղարուեստա-
կան եւ փիլիսոփայական տեսակէտից :

Ես մէջէ մէջ առաջ կը բերեմ Վեսելովսկու կարծիքները հայերէն
թարգմանութեամբ , եւ մէջէ մէջ էլ կը տամ իմ դիտողութիւնները , աչ-
խատելով ցոյց տալ « Լեւոնի Վիշտը » նշանաւոր պօէմի բուն էական
իդէան բովանդակութեամբ միասին իր թերութիւններով եւ մանաւանդ
բարեմասն առաւելութիւններով բանաստեղծական հանգամանքների մէջ :

Շուրաւէր .

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆ

ՀԱՅ ԱՂՋԻԿ

Իմ աննման հայ աղջիկ ,
Դու հրեշտակի թայ աղջիկ .
Անուշ վարդ ես բաղիս մէջ ,
Նախշուն փերի տաղիս մէջ :

Բաղըս բաղ չէ առանց քեզ ,
Տաղըս տաղ չէ առանց քեզ .
Տաղըս հին է ու երգւած ,
Իսկ իմ բաղը նո՛ր ծաղկած . . .

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Էն Վեսելովսկու թարգմանած « Երազը » եւ Ումանէցի « Իտալուհիք եւ
Իտալացիք » . միւսները « Լեւոնի վիշտը » պօէմիցն են վերցրած :